

բար, թէպէտ եւ անկանոն կերպով, մօտաւորապէս հինգ համար իր թոռոցիկների, մինչեւ 1885-86 ուսումնական տարւայ վերջը, երբ հիմնադիրների Մոսկվայից հեռանալու եւ զանազան կողմեր ցըւելու պատճառով, հայկական ազգասիրական-յեղափոխական գործունէութեան կենարոնը անցնում է թիֆլիս, ուր, քիչ յետոյ, հիմնւում է, ինչպէս վերեւ ասացինք, Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Բացի իր պարբերական հրատարակութիւններից, «Հայրենասէրների Միութեան» յաջողւել էր ձեռք բերել Մոսկվայում առաջին գաղտնի հայկական տպարան, որ նա ուղարկեց թիֆլիս, որուեղ մի ժամանակ տեղական գաղտնի շրջանների նպատակներին ծառայելուց յետոյ, վերջ ի վերջոյ, անցաւ Դաշնակցութեան տրամադրութեան տակ*):

«Հայրենասիրական Միութեան» հիմնադիր անդամներից երկուար (Ն. Արէլեան եւ Մ. Զալեան) բախտի բերմամբ պատահելով իրար Բագրում՝ հիմնում են այնտեղ, նոր բարեկամների աջակցութեամբ, «Դաշնակցութեան» Բագրայ ճիւղը, որ մանաւանդ նիւթական տեսակէցից նշանաւոր դեր է խազեցել Դաշնակցութեան գործունէութեան շրջանում 90ական թւականներին: Յիշած անձնաւորութիւններից կենդանի են այժմ (1919թ.) միայն Ն. Արէլեանը՝ ինժիներ, Մ. Զալեանը՝ բժիշկ, Սիմէոն Տէր-Գրիգորեանը՝ ուսուցիչ եւ բժ. Կ. Տէր-Խաչատրեանը: Մ. Վէքիւեանի վիճակը անյայտ է ինձ:

II

„ԱԱՍՈՒԻՆ“ ԿՈՄԻՏԵՆ

Մոսկվայի ուսանողութիւնը առանձնապէս աչքի լնինող զերէ է կատարել հայ յեղափոխական շարժման մէջ, մանաւանդ սկզբի շրջաններում: Արդէն 82 թւականից սկսած Մոսկվայում գործում էր «Միութիւն Հայրենասէրների» յեղափոխական կազմակերպութիւնը, որ կատ էր պահում թիֆլիսի հետ եւ հրատարակնց առաջին հայ յեղափոխական թերթը՝ «Ազատութեան Աւետարեր», ինչպէս եւ մի շարք թոռոցիկները: Մոսկվայի ուսանողութեան կողմից 1889ին երկիրն ուսումնասիրելու նպատակով թիւրքահայաստան ուղարկեց Լեւոն Սարգսեանը, որի «Այց թիւրքաց Հայաստանի» գիրքը լոյս տեսաւ Մոսկվայի ուսանողների նիւթական միջոցներով:

*.) «Հայրենասէրների Միութեան» կազմութիւնը Քր. Միքայէլեանի յուշերում մի քիչ տարբեր ձեռով է ներկայացւած: անունն էլ այնտեղ ուրիշ է՝ «Միութիւն Հայրենասէրներ»: Իրադէս կազմակերպութիւնը կոչում էր «Միութիւն Հայրենասէրների», ունէր կնիք՝ գաջոյն եւ ատրճանակ խորհրդանշանով, եւ հրատարակեց մի քանի համար՝ «Ազատութեան Աւետարեր» թերթը, որ Քրիստոնէարք համարում է հայերէն առաջին յեղափոխական թերթը: Այս մասին տես եւ Մ. Վարանդեանի «Հ. Յ. Դ. Պատմութիւն» գիրքը, էջ 16—17: ԽՄԲ.

Ութսունական թւականներին Մոսկվայի ուսանողութիւնը բաժանում էր երկու հոսանքի՝ այսպէս կոչւած «ազգայնալութերը», որոնք մերժում էին որեւէ մասնակցութիւն ուսական ընդհանուր շարժումներին եւ անհրաժեշտ էին համարում զրադւել միայն հայկական ազդային խնդիրներով, եւ «կոսմոպոլիտները», որոնք կողմնակից էին համապետական շարժումների մասնակցութեան: Քրիստոնիոր, Ս. Զաւարեան, Ս. Սահական, Ս. Զօրեան (Ռուսում) եւ ուրիշներ՝ Պետրովսկայա ձեմարանի դրեթէ ամբողջ խումբը՝ պատկանում էին այս վերջին հոսանքին:

90ական թւականների սկզբից Մոսկվայում տեսնում ենք կէսորութեական, կէս-մտաւորական մի կազմակերպութիւն, որին մասնակցում էր եւ պրոֆ. Ղամբարեանը: Այս կազմակերպութիւնը Գր. Արծրունու յորեւեանի առեթով հանգանակեց 2000 ըուբլի, «որից 1000ր. յանձնեց Թիֆլիսի դաշնակցականներին, իսկ միւս 1000ր. տրեց Արփիար Արփիարեանին:

1890ին, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, կենտրոնի յանձնարարութեամբ, իրեւեւ ներկայացուցիչ, Մոսկվա գնաց ուսանող Տիգրան Ցովչաննիսեանը եւ հիմք դրեց դաշնակցական կազմակերպութեան: Միաժամանակ առանձին դոյլութիւն ունէր, այսպէս կոչւած, բուրժուազիայի կազմակերպութիւնը: 1891ին ութը ուսանողներ պատրաստակամութիւն յայտնեցին երկիր անցնելու յեղափոխական գործունէութեան համար, բայց Թիֆլիսից յետ կեցրին: Այդ ուսանողները գնեցին զինադրժական արհեստանոցի համար գործիքներ եւ յանձնեցին Գալուստ Ալոյեանին Երկիր տանելու համար:

1892-93ին առաջ են գալիս ներքին սուր անհամաձայնութիւններ, որի հետեւանքով բուրժուազիայի կազմակերպութիւնը լուծվում է եւ, առհասարակ, զործունէութիւնը կանգ է առնում: 1894ին, Սամնոյ կոտորածների անմիջական տպաւորութեան տակ, Տիգրան Ցովչաննիսեանի ջանքերով, ստեղծում է մի նոր կոմիտէ, որի մէջ մտնում են երեքական հոդի ուսանողներից եւ երետասարդ վաճառականներից: Կոմիտէի անունը դըւում է «Սասուն», որ ընդունում է Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը եւ կապւելով Թիֆլիսի հետ՝ անցնում է գործի:

«Սասուն»ը բաւական երկար կեանք եւ արդինաւոր գործունէութիւն ունեցաւ: Նրա նպատակն էր՝ դրամ հաւաքել, զէնք մատակարարել կազմակերպութեան եւ պրոլագանդ անել յօդուտ հայկական դատի:

Դրամը ստացւում էր անդամակնարներից, նէքրներից եւ, գլխաւորապէս, տարեկան երեկոյթներից: Դրամի մեծ մասը ծախսում էր զէնքի վրա:

Պրոպագանդը կատարում էր զրաւոր եւ բանաւոր ո՛չ միայն հայերի մէջ, այլ եւ օտար շրջաններում: Հրատարակւում էին յովլրդական հանրամատչելի զրբոյներ ազդային-ազատասիրական բովանդակութեամբ: Խուսերէն լեզով հրատարակւեց «Պոլոշենի Արման» և Տրպին». (Հայերի գրութիւնը Թիւրքիայում) յայտնի գիրքը: Քարոզչական աշխատանք էր կատարում նաեւ ուստի հասարակութեան եւ, մանաւանդ, ուսանողութեան շարքերում:

1897թ. երիտասարդ վաճառականները դժգոհ ուսանողներից մէկից, բաժանւեցին «Սասուն» կոմիտէից եւ կազմակերպւեցին առանձին, որով երկրութիւնը ուսանողների եւ վաճառականների միջեւ շարունակւեց եւ բաւական վնաս պատճառեց :

«Սասուն» կոմիտէի ջանքերով էր, որ 1898ին Մոսկվայի, Պետերբուրգի եւ Խարկովի հայ ուսանողները միացան եւ մասնակցեցին Հ. Յ. Դ. երկրորդ Բնդհանուր Ժողովին՝ պատգամաւոր ուղարկելով համալսարանի ուսանող Յովսէփի Թագէուսեանին:

III

ԲԵԿՈՐՆԵՐ ԱՆՑԵԱԼԻՑ

ՅՈՎՍ. ԹԱԳԷՈՍԵԱՆ

1887թ. օգոստ. 1ին, 13 տարեկան հասակում, ես Ագուլիսից մեկնեցի Մոսկվա եւ մտայ Լազարեան ձեմարանի առաջին դասարանը: Մինչեւ 1892թ., հինգ տարի անընդհատ, գիշերօթիկ փակ կեանք եմ վարել եւ այդ ժամանակաշրջանի Մոսկվայի հայ ուսանողական կեանքի մասին շատ բան չգիտեմ:

Յիշում եմ՝ իմ աշակերտութեան առաջին տարին մի կիուակի օր մօտ եկաւ Միմոն Զաւարեանը եւ տարաւ ինձ Պետրովսկայա ձեմարանը, ուր ես ծանօթացայ մի քանի ուսանողների հետ: Քրիստովորն այդ ժամանակ մեկնել էր Թիֆլիս: Մի քանի անդամ այցելել եմ նաև ուսանող Տիգրան Յովհաննիսեանին եւ նրա մօտ ծանօթացել, ի միջի այլոց, Երւանդ Թաղիանոսեանի հետ, որ աչքի ընկնող դեր էր կատարում ուսանողութեան մէջ:

1895 թին աւարտելով Լազարեան ձեմարանը, ես մտայ Մոսկվայի համալսարանը եւ հէնց ուսանողութեան առաջին օրերից սկսեցի գործօն մասնակցութիւնը ունենալ հասարակական կեանքում: Ընտրեցի հայկական սեկցիայի ներկայացուցիչ ուսանողական ընդհանուր ներկայացուցչական ժողովում եւ վարում էի վերջինին քարտուղարութիւնը: Իսկ ուսանողութեան երկրորդ տարւանից մտայ նաեւ Հ. Յ. Դ. «Սասուն» կոմիտէի մէջ:

«Սասուն» կոմիտէի անդամներն էին այդ ժամանակ՝ ուսանողութեան կողմից բժ. Մինաս Մուրադեանը, Լիպարիտ Նազարեանը եւ ես. Երիտասարդ վաճառականների կողմից յիշում եմ Թումեանին (զոկ): Կոմիտէի ամբողջ գործունէկութիւնը կենտրոնացած էր զինք գնելու եւ որոպագանդի վրա: Զէնքը գնուում էր մի ուս պաշտօնեայի միջոյով եւ մաս-մաս փոխադրուում Կովկաս:

«Սասուն» կոմիտէի երեկոյթները շատ լաւ համբաւ էին վայելում եւ խոշոր նիւթական արդիւնք էին տալիս: Նրանց ներ-